

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՈՒՋԱՐԱՆԹԻՐԸ

Հայկական ամսոց ստուգաբանութիւնը մեր լեզուին շահեկան հոգմերէն մին է եւ բանասիրաց միտքը շատ յոգնեցուցած է: Նախ Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի, վանական մականուանեալ, աշակերտ Մխիթարայ Գօշի, ԺԳ դարուն, իր «Տօմարական գիտելիք» աւուն գրքին մէջ, որ անտիպ կը մնայ ի վննետիկ, ջանացած է ստուգաբանել որք պիտի յիշուին յընթացս յօդուածոյս: Թուականի կարգաւ, որչափ ինծի ծանօթ են, կուգան Նոր-Հայկազեան բառագրոց պատկառելի եւ յաւէրժ յիշատակաց արժանի երեքին հեղինակք: Յետոյ կուգայ ուրիշ Մխիթարեան մը, ողբացեալ հ. Ս. Տէրվիշեան, որ պոլսական թերթերու մէջ լեզուագիտական այլ եւ այլ ուսումնասիրութիւններ կը հրատարակէր, իր «Հնդեւրոպական Նախալեզու» գրքին մէջ «Նաւասարդ»ը մեկնած է ուրիշ կերպով: Այնուհետեւ կուգայ իր մրցակիցը Յովհ. քահ. Հիւնքեարպէյէնտեան, որ առանց ունենալու առաջնոյն տաղանդն ու լեզուագիտութիւնն, լոկ հայ-լուս. քահանայ մը լինելուն համար նախապատուութիւն տրուեցաւ իր «Ստուգաբանական բառարան»ին եւ պսակուեցաւ Իզմիրեանց մրցանակաւ: մինչդեռ առաջինը մերժուեցաւ: Հիւնքեարպէյէնտեան՝ պարսկ.-հայ, յուն.-հայ եւ ուրիշ լատիներէն բառարաններու վրայէն ինչ որ կրցած է յարմարցնել հայկական բառերու, միայն ցուցակագրած է զանոնք անհամար ուրիշ վրիպումներով: այս բառարանին 313 էջին վրայ կը տեսնենք ստուգաբանութիւնն ամիսներու: սակայն ուրիշները հիներուն կրկնութիւնն են: Սգրազպուրկի Համալսարանին մէջ հայերէնի ուսուցիչ Բրօֆ. Հիւպլման իր Հայ լեզուի Քերականութեան առաջին մասին մէջ Ահեկան եւ Մեհեկան ամիսները կը քննէ յաջող կեերպով: Պր. Դ. Պալկունց, որ այսպիսի հնագիտական նիւթերով զբաղող պոլսեբնակ հայ գրագէտնէն մէկն է, հ. Պոլսոյ «Բիւրակն» թերթին մէջ (1898 երես 53) հրա

տարակեց ուսումնասիրութիւն մը, որ նոր բան մը չէր պարունակեր. եւ սակայն «Հանդէս Ամսօրեայ» ջնաշխարհիկ կոչեց զայն եւ դրուատեց. Թերեւս ասկէ առաջ դնելու էինք Հ. Ղ. Ալիշանը, որ «Հին Հաւատք»ի մէջ կը գրադրէ այս խնդրով, յոյժ պահպանողական, մինչեւ ցարդ եղածով կը հոգնանայ առանց հեռիները երթալու :

Լսեցի թէ Կ. Յ. Բասմաջեան եւ Հրաչեայ Աճառեան «Բաղմալէպի» մէջ ունին ուսումնասիրութիւններ (1). աղոնք տեսած չեմ. միայն Բասմաջեան հաճեցաւ իրենին համառօտութիւնը ինծի հաղորդել : Սակայն ասոնք, թող ներուի մեզ ըսել, շատ չեղած չեն հին շաւիղէն. «անքննելի»ները կան ու կ'մնան. Նաւասարդ, Ահեկան եւ Մեհեկան նոր են, իսկ Հրոտից եւ Տրէ հինէն ի վեր քննուած են. Հոռի եւ Սահմի կ'մեկնուին վրացերէնով, քանի որ օռլի եւ յաօմի շատ կ'օտոննան ասոնց :

Այժմ փորձ մ'ալ մենք պիտի ընենք, աշխատելով մանաւանդ «անքննելի»ները եւ անմեկնելիները մեկնելով :

Մեր զաղափարը այն է թէ հայկական ամիսներու մէջ կրկին տարբեր կան — պարսկականն (նորը եւ ոչ հինը) եւ քաղդէականը կամ բաբելոնեանը : Քաղդէականը նախ որդեգրուեցաւ Ասորեստանցիներէն, ապա Եբրայեցիներէն եւ Ասորիներէն եւ հուսկ յետոյ Արաբներէն սակաւ փոփոխութեամբ : Քաղդէական ամիսները խիստ շատ անգամ յիշուած են ասորական արձանագրութեանց մէջ :

Մեր ըսածները աւելի լաւ հասկցնելու համար նախ աղիւսակ մը պիտի չինենք այս ալ եւ ալ աղգաց ամիսներուն :

Այս աղիւսակէն որոշ է որ հայկական տօմարին տարին կսկսի Օգոստոսին, որ է Նաւասարդին, քաղդէականն եւ իւր հետեւորդք՝ Նիսանին (Մարտ-Ապրիլ), իսկ պարսկականը՝ լուսնային սրբազան տարին Ատարով եւ քաղաքական-արեգակնայինը՝ Ֆէրվէրտինով. այն է Մարտին : Ինչպէս յայտնի է, այժմ եւս Յունվարին կսկսի տարին, Հայք իրենց բերնին համը գիտցող ժողովուրդ մ'են եղեր որ տարւոյն եղանակաց գեղեցիկը սեպհականած են ամանոր — Օգոստոսը, յորում ամեն ինչ առատ է եւ եղանակը յոյժ նպաստաւոր ամեն տեսակ խրախճանութեանց : Պարսիկները գարնանամուտին կսկսին, որ բնականապէս տարւոյն եւ բնութեան զարթոյն է :

Սակայն հայկական ամիսք փոխանակ եղանակին յարմարելու՝ թուական շարքին կը համեմատեն մեծապէս. այսինքն Նաւասարդ ամառ

(1) Պէտք է յիշել նաեւ Կ. Յսայի վ. Տայեցւոյ ուսումնասիրութիւնն, հրատարակուած «Բաղմալէպի» մէջ, 1897 էջ 334-339 : Այս առթիւ կը յայտնենք թէ բոլորովին համամիտ չենք յարդոյ յօդուածագրին բոլոր յայտնած տեսութեանց, եւ թէ «Բանասէր»ի մէջ իւրաքանչիւր յօդուածագիր իր գրածին միայն պատասխանատուն է :

նային ամիս մ'ըլլալով եւ հետեւաբար Օգոստոսին համեմատ լինելով, փոխանակ նոյն ամսոյն դիպող Շէհրվէրին սկսելու՝ Արտիպէհիտին կը սկսի եւ շարունակաբար. հայկական առաջին ամիսը քաղդէական կամ պարսկական առաջին ամիսէն կսկսի կամ կհամեմատի:

1. ՆԱԻԱՍԱՐԴ

Հայկական առաջին ամիսն է. կհամեմատի օգոստոսին. քաղդէական առաջին ամիսն է «Նիսանու», եբ. «Նիսան», աս. եւ ար. «Նիսան», զենտ. «Նավասան», նպ. «Նէվսալ, նէվրուզ = նոր տարի, ամանոր», Թալմուտին մէջ «Նէվսէրտի», սոկոտանեան «Նաւասարտ», խորազմեան «Նաւ սարջի»: Պարսկական արեգակնային տարւոյ առաջին ամիսն է՝ «Ֆէրվէրտին», որոյ առաջին օրը «Նէվրուզը խասէ» եւ վեցերորդ օրը «Նէվրուզը ամմէ» կկոչուի, որ է Ամանոր, Գարնանամուտ: Նաւասարդ եւս նշանակէ Ամանոր. — «Նաւա» = նոր, եւ սանսք. «սարատ» = տարի, նպ. «սալ», հպ. «սարդ», զենտ. «սարէտա» եւ հյ. սարդ = տարի: «Սարդ» հայերէն ուրիշ կրկին բառերու մէջ եւս կայ — «Երիտասարդ» եւ «աւ սարդ»: Բիտաք՝ + պատանի + սարդ (նպ. «սալ» = տարի. ինչպէս «տիլ» = սիրտ. քանզի սանս. hardi, զենտ. zeridaya, լտ. cordis, cor, յն. καρδια, րհք, անգլ. heart եւն.):

Նաւասարդ Քաղդէացւոց սոմարով համեմատի «Նիսանու»ին, որ զենտ. «Նավասան»ն է, այսինքն՝ նոր օր. զենտ. «ասան» եւ սանս. «հան» = օր ըսել է, որ նպ. մէջ «Նէվրուզ» եղած է: Ստեփանոս Ուռպելեան կերեւի թէ թափանցած էր քչիկ մը գաղտնիքին ուստի կըսէ՝ «Նաւրուզ, որ թարգմանի նաւասարդ»:

Որոշ կթուի թէ Քաղդէացւոց «Նիսան»ին ծագումը հնդկական կամ պարսկական է: Սանս. *«նաւական» զենտին մէջ «նավասան» զիւրաւ «Նիսան» կըլլայ. ինչպէս զիտենք, Քաղդէացիք եւ անոնց հետեւելով Ասորեստանցիք տարին գիշերահաւասարին կսկսէին. այժմ եւս Տաճկաստանի քաղաքական տարին Մարտէն կըսկսի: Ասորիներէ եւ Արապներէ անցած է Տաճկաստան. նոքա եւս հետեւած էին հին սեմական ժողովրդոց սոմարին:

Այլեւայլ ասուրական արձանագրութեանց մէջ յիշուած է թէ՝ «Նիսանի վեցերորդ օրը տիւ եւ գիշեր հաւասար են, վեց քասպուլ ցորեկ վեց քասպուլ գիշեր: — Նիսանի 15ին տիւ եւ գիշեր հաւասար են վեց քասպուլ գիշեր վեց քասպուլ ցորեկ: » Քասպուլ երկու ժամու միջոց մ'է. տես Smith, Assyrian Eponym Canon, p. 19.

Գարնան գիշերահաւասարը կհաշուէին միշտ տարեգլուխ, եւ գիշերահաւասարէն անմիջապէս յետոյ եկող լիալուսինն՝ սկիզբն նոր տարւոյ կհամարուէր:

Հայք Նաւասարդի տօնը մեծ հանդէսով կ'տօնէին . ամեն կողմ ուրախութիւն կը տիրէր . ինձ անյայտ են թէ ե՞րբ այդ գեղեցիկ տօնը բարձի թողի եղաւ եւ անոր տեղը տիրեց անբնական Յունուարի տօնը կամ տարեգլուխը . Կիւնէք Գ . Մագիստրոսի հառաչալից տողերը . «Ո՛ր տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի . զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց . մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք» : Ագաթանգեղոսի մէջ ալ՝ «ի ժամանակի դիցն ամանորարեր նոր պտղոց տօնին . . . յուրախութիւնսն նաւասարդ աւուր» :

Տեսնենք վանական վարդապետը ինչպէս կը մեկնէ . «Նաւասարդի՛ նոր ասի . այսինքն սկիզբն տարւոյ , կամ արդ է ժամանակ նաւելոյ , Հայոցս է ի վերայ որդւոց Հայկին . եօթն արու , Նաւասարդ , Հոռի եւն . եւն . երեք դուստր՝ Մարերի եւն . եւ երկու ի վերայ եղանակացդ Մարգաց եւ Հրոտից , Իսկ Աղուան ամիս Նաւասարդուլ , որ է Նաւասարդեցի , այսինքն ի թոռանց է . ի յուստերաց կամ զստերաց» :

Միզդարելի չէ վանական . իր ժամանակի պահանջն էր այդ քաջշուկները , խորենացիէն ժառանգ մնացած : Նոյն իսկ երբայագէտը ունւրոպացի գիտունք այդպիսի վրիպումներ ունեցած են , զ . օ . երբ . նիսանը կ'մեկնեն «նէց — ծաղիկ»էն , կկարծեն նշանակել՝ Մաղկօն : Հին երբայական ամիսն էր «Ապիպ» , որուն նշանակութիւնն է՝ կանանչ հասկ , որով՝ Հասկօն : Թէեւ կարծողներ կան թէ «Ապիպ» ամիսի անուն չէր :

2. ՀՈՌԻ

Գհամապատասխանէ Սեպտեմբերին . քաղզէական երկրորդ ամիսն է Aïru , նաեւ ասորականը . եբր . Iyyar . ըստ Յովսեփոսի Iâp , զոր կնոյնացնէ մակեդոնական Αρτεμιδο Շին հետ . (Եկեղեց . Բ) . եւ քաղաք է . ամիսն Դերութենէն առաջ կկոչուէր «Զիւլ» , ի մեզ եղած է «Զիււ» (Գ . Թազ . Զ . 37) , որ է ծաղիկ . ասորին եւ արարը ܐܝܪ Էյյար : Պարսկականն է ըստ արեգակնային դրութեան ۱۰ آذر - խիւրտատ , խօռտատ . հպ . Haurva-tâh , որ նշանակէ արեգակնատուր (ձիւրք) , մասնաւորապէս առողջութիւնը եւ կեանքը զոր Արամազդ ունէր եւ կը շնորհէր իր արարածներուն : Զրադաշտական կրօնին մէջ Հուրվատատ կամ նպ . Խօռտատ՝ հինգերորդն էր վեցեքին Անմահներէն կամ Անմահ - Սուրբերէն (Amēsha Çpentas) որք պատելը կվայելէին Արամազդայ խորհրդականները լինելու . Խօռտատ կիշխէր բուսականաց եւ գետոց վրայ եւս : Դիտենք նաեւ որ Արեւը կը պաշտուէր ի յիշատակ Խօռտատի , եւ այս ամիսը նուիրուած էր Արեգակի յիշատակին , այսինքն պաշտեցեալ աստուծոյ յիշատակին : «Հուրվատատ»ի կամ Խօռ - տատի առաջին մասը Haur , Խօռ նշանակէ՝ արեւ . ասոր ուրիշ ձեւերն են՝ դենտ . «ռալի» , նպ . ܐܘܪ (խալէր) , ܐܘܪ (հալէր) , ܐܘܪ (լէվ) եւ հայ . արեւ : Ասոնց ամենեցուն մայ-

ըր կրնանք նկատել սան . sūrya, որ էր Արեւ - աստուածն հայկական դիցաբանութեան : Հետեւաբար մեր Հոռին քղդ . Airu, երբ Iyyar, ար . աս . «էյյար», նպ . «Առ», բոլորը կուգան հպ . «Հուր-»էն : Haurva-, Aura- «խօռ» մեր լեզուի բառերուն վրայ մեծապէս ազդած են : Հայերէն Հուր, վառ, փռուն, Արայ կուգան կամ կազդուին ասոնցմէ . սեւ մական եւ արաբական օրեզուաց մէջ իրենց նմանները կամ բարդեալները շատ են, ընդ որս ար . «եարրէ», «վուռէ», «վառ», «ուր», «նուր», «ֆուրուն» եւ երբ . «օր», «նօր», նպ . «խուռէ», «խար» կամ «խօռ» եւ «հիյր», նաեւ «հիյրպէտ» կամ «հէրպէտ» ܐܝܪܐ ալիսքն՝ հըրապետ = իշխան, տէր, փառաւոր, վարդապետ . նոյնպէս եւ հայերէն Հայրապետ, զենտ . atrapaiti . իսկ «վարդապետ» կամ «վարպետ»ն ալ թերեւս անկէ ըլլայ, Մայրապետ յետին դարուց դործ է հետեւողութեամբ «հայրապետ»ին, կարծեւով թէ հայրէն կածանցի :

Վանական կըսէ՝ «Հոռի, զի հորեն երկրագործք եւ մշակք . զցորեան եւ զգինի ի շտեմարանս ժողովեն» :

3. ՍԱՀՄԻ

Կհամեմատի Նոյեմբերին . քաղդ . եւ ասուր . «Սիվանու», երբ . «Սիվան» կրօնական երրորդ իսկ քաղաքական իններորդ ամիսն է, յետ Գերութեան ընդունուած . մի անգամ միայն յիշուած է ի Ս . Գիրս , Եսթեր Ը . 9, ուր Եօթանասունք սխալմամբ Nisav դրած են եւ հայերէնը նոյնպէս «... յամեանն Նիսան՝ որ է Արեգ» : Պարսկական լուսնային տարւոյն երրորդ ամիսը «Իսթէնտարմիտ», սէֆէնտարմիտ, զենտ . եւ հպ . Çpenta-Armaiti, պահլ . sapandomad . Սէֆէնտարմիտ կամ Սպանդարամիտ (= սանդարամիտ ի մեղ)՝ էր չորրորդն ի խորհրդականաց Արամազդայ . նշանակութիւնն է՝ սպիտակ կամ սուրբն Արմաիդի . կներկայացնէր երկիրը, եւ էր Երկիր-դիցունհին եւ Բարեպաշտութեալ Ոգին . այս ամիսն էր ի յիշատակ անոր : Թերեւս ծագումը հնդկական լինի . վանդի Սիվա (սանք . Civa = սպիտակափառ, բարերար) էր հնդկական երրորդութեան հինգգլխի, երեքաչուր եւ քառանկուն մէկ անգամը . վրէժխնդրութեան եւ կործանման դիցունհին, եւ էր խորհրդանշան բնութեանց արտադրութեանց եւ պողաքերութեանց, նոյն եւ նըման Սրենդայի կամ Սիֆէնդայի :

Սիվա դիցունհին իշխանութիւն ունէր ուղղակի բուսեղինաց, մանաւանդ անոնց սրբազնագունին, գերերջանկին Սոմաի կամ Հօմաի վըրայ, որ այնչափ մեծ մասն եւ բաժին ունէր զրադաշտական եւ հնդկական կրօնից պաշտաման մէջ եւ նոյն իսկ աստուածացած էր . ասուր . ցին եւ ասուր . սին, այդ տունկին հոյզէն շինուած ըմպելին, amritan = անմահութեան ըմպելին էր :

Որոշ կերեւի թէ հայ․ Սահմի, քաղդ․ Sivanu, եբր․ Sivan, պ․ Սէ-
ֆէնտ - , հպ․ եւ զենտ․ Çpenta- , պահլ․ sopand ամենեքին մի են եւ
թերեւս կուգան հնդկական sivaէն կամ somaէն :

Լսենք վանականը․ «Սահմի, զի դնայ հարաւային եւ դայ հիւսի-
սային (հողմ) եւ դարձեալ իմաստուն արք սահմանեն զտունս իւրեանց
առ ի դալ ձմերայնոյն» :

Հայ երկու բանասէրք վրացի «սասմի = երկք»էն յառաջ բերած են
ինչպէս որ Հոռին ալ վրացի «օռի = երկուք»էն :

Կ․ ՏՐԷ

Կհամապատասխանէ դեկտեմբերին․ քղդ․ «Տուզու, Տումուզի»,
աս․ եւ ար․ «Թէմուզ», եբրայական չորրորդ ամիսն է «Թամուզ»,
պարսկական կրդ արեգակնային ամիսն է «Թիբ»․ Տիբ, Տիւր յիշուած է
մեր գրոց մէջ իբրեւ պաշտելի չաստուած մը․ եւ արդէն այնպէս
էր Պարսից դէնին մէջ․ ունէր իշխանութիւն ի վերայ անասնոց եւ
թռչնոց եւ թերեւս պատգամաբեր խորհրդականաց Արամազդայ։ Ագաթ․
յիշէ «Նրազացոյց, երազընդհան պաշտօն Տիւր դից»․ — «Վանաստուր
Տիւր դից», նաեւ՝ «Տիբ, օն անդր» = Աստուած չընէ․ նոյնպէս «Տիբ
դիք»․ եւն․ եւն․ :

Տիբ կհամապատասխանէ Յունաց Հերմէսին, Եգիպ․ «Թօթ»ին, Հռովմ․
Mercurius Մէքքիւրքիոսին, Փիւնիկ․ Ատօն կամ Ատօնիս, եւ բաբելա-
կան Թամուզին։ Թամուզ՝ բաբելական Իսիթարին որդին էր, պատանին
Արեւ - Աստուած, որուն տարածամ մահը ռամկին մտքին վրայ մեծ տը-
պաւորութիւն ըրած էր․ ի Քաղդէա, յԱսորեստան, ի Փիւնիկէ եւ ի
Քեսոստան ժողովուրդներ եւ քաղաքներ օրերով միատեղ կուգային եւ
մոլեռանդութեամբ անոր մահը կողբային․ նոյն իսկ Եգեկիէլ տեսաւ
Թամուզի մահն ողբացող Հրէայ կիներ, որք ողբ ու կոծ կընէին Տաճա-
րին մէջ, յերուսաղէմ։ Ի Սուրիա, Հերապոլիս եւ Հալէք ճանչցուած
էր Hadad կամ Dadi անուամբ մինչ համայն Փոքր - Ասիոյ (Քեսոստանի)
մէջ կպաշտուէր Attys Ադդիս անուամբ, «Լուսափայլ աստեղց հովիւը»։
Անոր մահուանը մասին եղած առասպելը Քեսոսցւոյ մէջ փոքր փոփոխու-
թիւն մը կրած էր․ այս պատանի դիցունէին Պօղազ - քէօյի քանդակնե-
րուն մէջ մայր դիցունէոյն ետեւէն կուգայ, անոր պէս յովապի կամ
առիւծի վրայ հեծած :

Լուսնական Թիւր ամսուն կհամեմատի Ապ ամիսը, եւ Թիւր ամսոյ
13 օրը կկոչուէր Ապրիլզիկեան, ապրիլյան = «Չրցատի տօն»․ այն օր
իւրարու վրայ ջուր կնետեն եւ Թիւր = Տիւր աստուծոյ սիրական թռչու-
նը աղաւնին կթօցունեն։ Թիւր ամիսը կհամեմալի մեր Վարդապետի
ժամանակներուն․ ուստի որոշ է թէ Հայք ինչո՞ւ այնչափ ուրախու-

Թեամբ կտօնեն այդ տօնը : Լատ. կամ Հռովմ. Մէրքիւրիոսը ի մեզ «Մարգարէ» եղած է նոյն եւ նման պաշտօնով . «մարգարէ» եւս պատգամաբերն էր Նիովային, ինչպէս Մէրքիւրիոս էր Թարգման եւ պատգամաբեր աստուածոց նման Հերմէսին :

Վանական կըսէ՝ «Տրէ, զի տայ կամ կրէ գիշերն յօրէն զժամն եւ զմասունքն» :

Ասողիկի ժամանակ յէ դարու «որ օր ի. էր Տրէ ամսոյն ի կութն այգեստանի» :

5. ԲԱՆՈՑ

Կհամեմատի Դեկտեմբերին . ձմրան առաջին ամիսն է . քաղդէական ձմեռնամուտի առաջին ամիսն է՝ համաձայն Դեկտեմբերի՝ Kislivu, եբր. Kislev, աս. եւ ար. «Բանուն» (քեանունը էվվէլ), պարսկ. համեմատ է «Շէհրիվէր» եւ հպ. «Ոշադրա-վէրեա» : Վերջինս Արամազդայ խորհրդականներէն երրորդն էր, որ կնշանակէ՝ օտացուածք, հարստութիւն, եւ էր տիրող եւ պաշտպան մետաղներու եւ պարգեւիչ հարստութեանց :

Պէնֆէյ գերմանացի գիտնականը ամենայն յաջողութեամբ եւ լեզուագիտական ծանօթ օրէնքներով Kisliv, կամ Kislivu-ն կրերէ զենտ . Ոշադրավարեա-յէն (1) : Հայերէն «Բասդեւ» տառադարձութիւնը ինչպէս կտեսնենք Ա. Մակ. ա. 54, Զաք. է. 1 ելած է Նօթանասնից καθέλευ էն . իսկ մեր Գաղոցն եւս կուգայ ուղղակի «Բասդեւ»էն, փոփոխմամբ տառից եւ տեղափոխմամբ, նոյն այն օրէնքով որ՝ պ. ܚܠܐ (սախթ) = «խիտ», սեֆերնէ = «սերկեւիլ», ցարխ = «ճախարակ» կընէ, հաստատուն եւ հասարակ երկու լեզուաց բառերուն . — $\frac{12345}{\text{քաղոց}} = \frac{12534}{\text{քասդե}} = \text{Khisliv.}$

6. ԱՐԱՑ

Կհամեմատի յունուարին . քաղդ. եւ ասուր. վեցերորդ ամիսն է «Իլուլու», աս. եւ ար. «Իյլուլ», եբր. «Իլուլ» սրբազան վեցերորդ եւ քաղաքական ժրիդ ամիսը . (Նէեմ. զ. 15) : Իլուլ՝ անունն էր Alila անուն գիցուհւոյ, որ ըստ Հերոդոտոսի կպաշտուէր յԱրաբիա . եւ նոյն այն յատկութիւնք եւ պատիւ կտրուէին իրեն որպէս Աստղիկին (Venus). (Հերոդ. Գ. 8) :

Պարսկ. լուսնային վեցերորդ ամիսն է «Արտի» կամ «Ուրտիպէհիշդ», հպ. «Աշա-վահիսդա» . սա էր երկրորդն ի խորհրդականաց Արամազդայ, եւ նշանակէ՝ բարձրագոյն ճշմարտութիւն, ճշմարիտ լոյս, երկնային լոյս, էր «լոյս» տիեզերաց, ամենուրեք եւ ամենատարած .

(1) Benfey, Monatsnamen einiger alter Völker, p. 124 .

կապաշտականէր լուսաւոր մարմինները եւ ամեն ինչ որ լոյսով կգոյանար :
Հայերէն «Արաց»ը կծագի ուղիղ զծով «Արտի»էն . զի $s = g$:
Ս . Գրոց հայ թարգմ . մէջ նոյնացած է ժԱլդ ամսեան՝ «Շէպաթ»ի կամ
«Շուպաթ»ի՝ հետ . «ի 24 ի մետասաներորդի ամսեան , որ է ինքն
Արաց» . Զաք . ա . 7 :

Վանական վարդապետ կրտէ՝ «Արանց կամ արեաց ամիս ի ձմեռան» :

7. ՄԵՀԵԿԱՆ

Մեհեկ , Մեհեկան , Մեհեկի կհամեմատի Փետրվարին . քաղդ . եօթ-
ներորդ ամիսն է «Թալրիթու» , աս . եւ ար . «Թշրիյն» , բալմիրեան
արձանագրութեանց մէջ յիշուած վեց ամիսներէ մին է , երբ . «Թշրի» քա-
ղաքական առաջին ամիսը . երրայագէտք կըբրեն զայն «սկիզբ» նշանա-
կող արմատէ մը (ար . շուբու՝) . Ս . Գրոց մէջ մէկ անգամ յիշուած է «Ա-
թանիմ» անուամբ . «յամսեանն Աթանիմ . . . այն է ամիսն եւթնե-
րորդ» . (Գ թագ . Ը . 2) : Պարսկ . տօմարին եօթներորդ ամիսն է «Միհ-
րիմահ , Միհրիկեան , Միհրիճան» . առաջինն աշնանային ամսոց եւ
ամեն արեգակնային ամսոց վեցերորդ օրը՝ պարսկական երկու հոչա-
կաւոր տօներէն մին՝ էր , միւսը՝ ինչպէս գիտենք՝ Նէվրուզն էր :

Պահլ . «Միհրական» , հպ . «Միդրաքանա» , արշակունի արձանա-
գրութեանց մէջ՝ ի Պարթեւաստան՝ «Միհրական» եւ Միտրական» . հա-
յերէն «Մեհեկան» փոխանակ «Մեհրեկան» ըլլալու , զի «ր»ն կորսուած
է , ինչպէս նաեւ «Ահեկան»ի մէջ , թէեւ «Մեհրուժան» կամ «Մեքուժան»
(Միրիճան) անուանց մէջ կպահուի : Այս կորուստը ընդուարանօրէն կը
մեկնուի մեր դեկան կամ դահեկան բառերու վրայ կատարուած խաղով .
զի այս բառերը կծագին հպ . ջարկունէն որ պահուած է Նգր . Ը . 27 եւ Ա
Մնաց . իթ . 7ին մէջ . — երբ . յասրկօն , դարֆօն , ասոր . դարիկօնա ,
Միշնայի մէջ ջարկօն : Նաեւ պ . Վիհրեան՝ հղած է ի մեզ «մեհեան» , վի-
հրպիճն = մեհեւանդ :

Վանական կրտէ՝ «Մեհեկի է Մահ եկի . զի տունկը եւ բոյսը որպէս
զմեռեալ լինին եղեմապատ եւ ձիւնաթաղ . մահ եկի այսինքն ածի» :

8. ԱՐԵԳ

Հայկական ութերորդ ամիսը , որ կհամեմատի Նոյեմբերին . Քաղդ .
համեմատ ութերորդ ամիսն է «Արախ սամնու» , երբ . «Մարխէշվան» ,
նոր հրէարէն «Խէսու» , իսկ պարս . ութերորդ ամիսն է «Ապան» կամ
«Մահապ» :

Առաջին ակնարկով մարդ կիորձուի հայերէն «Արեգ» բառն հա-
մարեւ արեգակ - ին արմատը . եւ յիշուի պ . جرج (իյրէճ) = արեւ , արեգ ,
արեգ + ակ = արեգակն . և՛ թարմատար սովորական գիրն է . ոչ թէ ըստ

ումանց՝ արեգակն = ակն արեգի։ Սակայն արեգական նուիրեալ ամիսը ասոր նախորդն՝ այսինքն եօթներորդ ամիսն էր․ ճիշտ անկէ հաջորդութիւն ամիս մ'ալ ձօնել անդէպ էր, մասնաւոր որ հայկական ամիսներու անուանը բոլորն ալ իրանեան կամ քաղղէական են, ինչպէս կտեսնենք։ Ուստի Արեգն ալ պարտինք անոնցմէ համարել եւ համեմատել քաղղ․ արախին հետ, համապատասխան Արախ սամու, այսինքն ութերորդ ամիս։ Սակայն արախի նախնական նշանակութիւնն է «լուսին» երբ․ քաղղ․ աս․ ար․։ Երբ․ «եէրէխ, երէխա», աս․ «եարխա», ար․ خ (որմէ خ) հայ․ «եարխայ» որ է «միամսեայ (մանուկ)»։ Այս «եէրէխ»ին կամ «արախ»ին երկրորդ նշանակութիւնն է՝ ամիս, ինչպէս շատ լեզուաց մէջ․ պր․ «մահ» = լուսին, ամիս․ Թրք․ «այ» = լուսին, ամիս․ նոյնպէս լատ․ եւ յուն․ լեզուաց մէջ ալ։ Ուստի կհետեւցնենք որ թէ՛ Քաղղէացիք եւ թէ՛ մեր նախնիք այս անուամբ կհասկնային եւ կտօնէին Լուսինը․ ամիս նշանակութեամբ «արախ» շատ վերջերը եղած լինելու է։ Այսպէս Արեգ կնշանակէ ոչ թէ արեւ այլ «լուսին»։ Կամ թէ մեր նախնիք «սամու»ն ձգեցին միայն համառօտելու համար, ինչպէս «մարխէշվան»ի «-վան»ը ձգեցին համառօտութեան սիրոյն համար։

Այս ամու պարս․ կհամապատասխանէ «Ապան», որմէ կծագին քաղղ․ «Ապու», եր․ աս․ ար․ «Ապ» ամիսները․ այլուր տեսանք թէ Ապան մեր Վարդապետին կհամապատասխանէ։ Այժմու Տաճկաստանի ելեւմտական տօմարին մէջ Օգոստոս ընդունուած է «Ապ»ին տեղ։

Վանակ․ վարդ․ կըսէ՝ «Արեգ, որպէս թէ յառնեն բոյսք․ Արի՛ ասէ հիւսիսի, եւ եկ հարաւ, որ է գարնան ամիսն․ Արեգակն, մեծ ակն ասի, կամ լուսոյ ակն»։

Կոչումն Ընծայութեան մէջ մակեդոնական Քսանթիկոսին համեմատուած է։ Իսկ Եսթ․ բ․ 16 «Ադար»ի եւ ը․ 9 «Նիսան»ի համապատասխան դրուած է։

9․ ԱՀԵԿԱՆ

Կհամապատասխանէ Ապրիլին․ Պարսից համար 9րդ ամիսն է آذر Ադար, որմէ քաղղ․ «Ադարու», երբ․ «Ադար», եգիպ․ Athor, հին ասորական Atargatis, հպ․ Atriyata․ Բ․ Մակ Ժա․ 30, 33ին մէջ մակեդոնական Քսանթիկոսը հյ․ Ահեկան թարգմանուած է․ նաեւ 38 հմբին մէջ Որմզդական տօն․ Որմզդական տօն թարգմանուած է նաեւ Dioscorinthius ամիսը որ Թերեւս Կորնթական Արամաղդ կամ Որմիզդ ըսել է։

Ինչպէս Միհրիկեան՝ Մեհեկան էր, նոյնպէս Ադրական, Ահրական՝ Ահեկան եղած է․ պահլ․ «ադուր», ավեստա «ադարու», պաղեւտ «ադար» կնշանակեն՝ կրակ, աթար (գաւառական բառ), նպ․ «ապէր» նոյնպէս կրակ, եւ Ագէրմահ = հրային ամիս․ Ադրական = Հրատօն, հրային տօն։

10. ՄԱՐԵՐԻ

համապատասխան է Մայիսին՝ քաղդ. 10րդ ամիսն է «Թէպիտու», եբր. «Թէբէթ»։ Պարսկական տմսոց մէջ կայ «Միւրտատ» = Յունիս, որ համեմատելի է աւոր հետ, եւ նաեւ 9րդ լուսնական ամիսն է։

Ջրագաշտական կրօնին մէջ Միւրտատ կամ Ameretāt նշանակէ «կենսատու» (amer հյ. ապուր, ապրիլ), որ էր վեցերորդն Արամազդայ խորհրդականներէն որ խօստատի հետ կիշխէր բուսեղինաց վրայ եւ կեանք կրաշխէր աշխարհի։ Տառագարձութեան դժուարութիւն մը կծագի, բայց ունինք արդէն նոյնանման բառ մը — «Ապիրատ», ր հպ. appetat, պահլ. apidati, բազ. avidad = «անիրաւ» բառն է՝ նպ. «պիտատ»։

Վանական վարդ. կըսէ՝ «Մարերի՝ յորժամ թաւանան մայրիք տեւրեօք եւ ոստօք, եւ լինին որպէս մայր թռչնոց եւ գաղանաց»։

11. ՄԱՐԳԱՅ

Համապատասխան է առ. եւ ար. «նազիրան», եբ. «Մարխէշվան», ասոր. «Մարնէզվան»։ այժմու Հրէայք «նէսու» կգործածեն։ Ոնգիւրան եւ Մարնէզվան միեւնոյն բառերն են, վանկերու տեղափոխութեամբ։ հայերէնի մէջ Մարնէզվանի կամ Մարխէշվանի վերջին վանկը թողլով «Մարգաց» ըրած են։ Ասորերէն բառգրքին մէջ ինազրան՝ կկոչուի ասորական 10րդ ամիսը (1)։ Մար-գաց = ինազ-րան։

«Մարգացն է ժամանակ ամելոյ զմարգս՝ սր ի դաշտս եւ ի հովիտիցն, յալգեստանս եւ ի բուրաստանս» կըսէ Վանական։

12. ՀՐՈՏԻՑ

Հրոտից կամ Հրոտից. պարսկական արեղականային տօմարին առաջին ամիսն է որ կը համապատասխանէ, այն է «Ֆէրվէրտին», որ կարգաւ կուգայ Հրոտիցին։ Կթուի թէ «Ֆէրվէրտի» = Հրոտի, հրոտիք եւ հրոտից՝ եղած է։ Վանական կըսէ՝ «Հրոտիցն ըստ գրութեան է. գի հուր է ոտիցն, որ այրի ի ներքուստ ի վեր ջերմութիւն արեգական»։

13. ԱԻՆԼԵԱՅ

Վանական վարդապետ թուի թէ յոգնած դադրած կըսէ՝ «Թողում գինդ թիւ աւելեացն անքննական»։

Քաղդ. archu makru sha adaru «ամիս որ կհետեւի Ատարին», եբ. «Աէադար», պրսկ. «Ֆէրվէրտիեան, Ֆէրվէրտիկեան, Ֆէրվէրտիճան, Ֆէր-

(1) Thesaurus Syriacus, by Mrs. Margoliuth..

տէճան», պահլ․ «Փարվարտիկան»․ սակայն հայերէն Աւելեացը յարա-
բերութիւն չունի ատոնց հետ ստուգաբանօրէն : Աւելեացի հնգեքին ա-
ւուրք եւս, նման ամսոց իւրաքանչիւր աւուրց, անուններ ունին պար-
սերկերէնի մէջ .

առաջին օր հպ․	ահուհաւատ	նպ․	աֆիրի,	- րիյն = օրհնենք
երկրորդ »	» ասդաւատ	»	ֆէրուիս	= երջանիկ, ուրախ
երրորդ »	» էսֆինտամատ	»	ֆիրուզ	= յաղթութիւն
չորրորդ »	» վահուխշադրի	»	ռամիշդ	= հանգստութիւն
հինգերորդ »	» վէհիշդօհիշդ	»	տիւրուտ	= շնորհակալութիւն :

Աւելեացին առաջին օրն է աֆիրի, հայացած է «աւելի, աւելի»
ձեւով․ «հրորտից»ի նման հոլովուած է «աւելիք, աւելեաց» : Քանի որ
հայկական ամիսք ամենեքին կուգան իրանեան կամ քաղղէական աղբիւր-
ներէ, պատճառ չկայ հայերէնէ բերելու : Հայք Աւելեացի օրերուն մի-
այն առաջինը առած եւ կարճ կապած են, սովորութիւն չունենալով
ամսոց ամեն օրուան որոշ անուններ տալ :

Ուստի «Աւելեաց» եւս պարսկերէնէ կուգայ :

• • •

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա

«Սըր Հէնրի Ռաուլինսըն առաջինն էր որ դիտեց թէ Ներքովդի
կամ Իզուուպարի ԺԲ երգերէ բաղկացեալ քաղղէական բանաստեղծու-
թիւնը՝ տարւոյն ԺԲ ամիսները եւ զողիակոսի ԺԲ նշանները կներկայա-
ցնեն : Յետոյ Dr. Haupt դիտեց թէ երկրորդ երգին իմաստուն ցու-
մարդը (bull-man = ցլամարդ) էապանի՝ կհամապատասխանէ երկրորդ
ամսոյն, «Իյար»ի, այսինքն Ապրիլ - Մայիսի, (Թերեւս պարսկերէն
«Ապան մահ»ը ըլլայ,) որ զողիակոսին մէջ կներկայացուի Յուլով : Եր-
րորդ երգին մէջ երգուած էապանիի եւ Ներքովդի միութիւնը՝ կհամա-
պատասխանէ երրորդ ամսուան, «Սիվան»ի, այսինքն Մայիս - Յունիսի,
որ զողիակոսին մէջ կներկայացուի Երկուորեակով : Եօթներորդ
երգին մէջ երգուած Ներքովդի հիւանդութիւնը՝ կհամապատասխանէ Դրդ
ամսուն, «Շչրի»ի, որ է Սեպտ․ - Հոկ․, յորում արեգակը նուազիւ կը
սկսի : Եւ ԺԱրդ երգին Զրհեղեղը՝ կհամապատասխանէ 11րդ ամսու,
«Շէբաթ»ի, նուիրեալ փոթորիկի աստուծոյն, Ռեմոնի, եւ զողիա-
կոսին մէջ կներկայացուի Զրհոսով . (պարս․ Ապանը Թերեւս ասոր
աւելի լաւ յարմարի) : » Max-Muller, What India teaches us, էջ 138 .

ՅԱԻՆԵԼՈՒԱՄ Բ

Ազարիայի տօմար մ'ալ ունինք զոր կգործածեն մեր, Հնդկահայ եղբարք. անոնց ամսանուններն ալ զարմանալի են եւ կարծեն ուսումնասիրուիլ.

1. Շամս արար. շէմս = արեգակ,
2. Ադամ Թերեւս նախամարդը, Ադամ պապան,
3. Շրաթ ար. եւ աս. Շուպաթ,
4. Նախայ ար. նաքէ (ուղտ) ?
5. Ղամար ար. Գամէր,
6. Նաթար ար. նէդար, նէսր (արծիւ) ?
7. Թիրայ պ. Թիր, հյ. Տրէ.
8. Դամայ
9. Համիրայ
10. Արամ
11. Ուղան
12. Ներհան (1)

Արդեօք մեր բանասէրներէն մէկը կրնա՞յ ո եւ է լոյս սփռել այս նիւթին վրայ :

Մարգուան, Անաթոլիա Գուլէճ.

Յ. Վ. ՅԱԿՈԲԵԱՆ

(1) 13րդ մըն ալ ունին որ «Աւելեաց» կը կոչուի եւ 5 օր կը տեւէ :